

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ. սեպտեմբերի 10-ի նիստի

Խորհրդի 31 անդամներից ներկա էին 26-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Խորհրդի նախագահը ներկայացրեց ԵՊՀ ռեկտոր Ա.Սիմոնյանի N158 §8 հրամանով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում կատարված փոփոխությունները՝ նշելով, որ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ խորհրդի կազմից դուրս են եկել Միջազգային և Եվրոպական իրավունքի ամբիոնի նախկին վարիչ, ի.գ.թ., դոց. Վ.Քոչարյանը, խորհրդի քարտուղար, ի.գ.թ., դոց. Է.Շաթիրյանը, և նրանց փոխարեն խորհրդի կազմում հաստատվել են Միջազգային և Եվրոպական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ի.գ.թ. Վ.Վարդանյանը, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս Տ.Սուջյանը, ում վերապահվել են նաև ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի պարտականությունները: Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը նաև հավելեց, որ բակալավրիատն ավարտելու կապակցությամբ խորհրդի կազմից դուրս է եկել ուսանողական խորհրդի նախագահ Ս.Խաչատրյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ.

1. *Գիտական հաղորդում (զեկ.՝ դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյան):*
2. *ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015-2016 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում (զեկ.՝ խորհրդի քարտուղար Տ. Սուջյան):*
3. *Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Ղազինյան):*
4. *ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրություն:*
5. *Ընթացիկ հարցեր:*

**1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում. «ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի հայեցակարգը» (զեկ.՝ դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյան):**

Զեկուցողն անդրադարձավ ՀՀ գործող քրեակատարողական օրենսդրության բարեփոխման նախադրյալներին, ներկայացրեց ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգային բնութագիրը և կարգավորման հիմնական սկզբունքները, այդ թվում՝ ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների ենթարկված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի համակարգի և դրանց կիրառության ընթացակարգի վերանայումը, քրեակատարողական ծառայողների գործողությունների անգործության կամ ընդունված ակտերի բողոքարկման մեխանիզմների նախատեսումը, ազատազրկման դատապարտված անձանց պահման ռեժիմների փոփոխության կանոնների վերանայումը, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման գործող համակարգի վերանայումը: Զեկուցողը հատուկ անդրադարձավ նաև ազատազրկման, ազատությունից զրկված անձանց իրավունքների և պարտականությունների կարգավորման հիմնական սկզբունքներին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Դ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն:  
Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

**2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015-2016 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատման հարցը (զեկ.՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյան):**

Խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը ներկայացրեց գիտական խորհրդի 2015-2016 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը, որով նախատեսված է թվով ինը հերթական նիստերի անցկացում՝ ըստ անհրաժեշտության արտահերթ նիստեր հրավիրելու հնարավորությամբ: Խորհրդի քարտուղարը նշեց, որ նիստերի՝ ծրագրված օրակարգն ընդգրկում է գիտական հաղորդումներ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում, ընթացիկ և եզրափակիչ քննությունների արդյունքների ամփոփում, ֆակուլտետի ընթացիկ գործունեության հետ կապված այլ հիմնական հարցերի քննարկում: Խորհրդի քարտուղարն ընդգծեց, որ հաշվի առնելով գիտական հաղորդումների արդիականությունը 2015-2016 ուսումնական տարում՝ պայմանավորված սահմանադրական և դատաիրավական բարեփոխումներով, ծրագրով նախատեսվել է հրավիրել արտահերթ նիստեր՝ հատուկ գիտական հաղորդումների ներկայացման նպատակով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ն.Այվազյանը, դոց Ս. Մեղրյանը, դեկանի տեղակալ պրոֆ. Հ.Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015-2016 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը:

Աշխատանքային ծրագիրը կցվում է արձանագրությանը:

**3. ԼՍԵՑԻՆ.** Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյան):

Խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը ներկայացրեց իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության ամփոփ արդյունքները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ա.Հայկյանը, դոց Վ.Ավետիսյանը, դոց. Կ.Գևորգյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաղորդումն ընդունելի գիտություն:

Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

**4. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրության հարցը (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյան)

Խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը հայտնեց, որ ԵՊՀ կազմակերպաիրավական ձևի փոփոխությամբ պայմանավորված՝ ձևավորվելու է նաև ԵՊՀ գիտական խորհրդի նոր կազմ: Հաշվի առնելով, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետից որպես ԵՊՀ գիտական խորհրդի անդամ մշտապես ընտրվել են ֆակուլտետի տարբեր ամբիոնների վարիչներ ռոտացիոն սկզբունքով՝ խորհրդի նախագահին առաջարկեց Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Ս.Մեղրյանի թեկնածությունը՝ նշելով, որ վերջինս ունի ամբիոնի վարիչի բավականաչափ երկար՝ գրեթե 8 տարվա աշխատանքային ստաժ և համապատասխանում է ԵՊՀ գիտական խորհրդի անդամին ներկայացվող պահանջներին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, դոց. Ա.Մարգարյանը:

## **ՈՐՈՇԵՑԻՆ.**

Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Ս.Մեղրյանին ընտրել ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

## **5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

**5.1. ԼՍԵՑԻՆ. 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ. Ղազինյանը, դեկանի տեղակալ, պրոֆ. Հ. Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Գաբուզյան Քրիստինե Արայի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.
2. Ղազարյան Տիգրան Սամվելի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ.
3. Պետրոսյան Լիլիթ Հովհաննեսի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վ. Ներսեսյանցի անվանական կրթաթոշակ:
4. Սաղոյան Եվա Գագիկի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ:

**5.2. ԼՍԵՑԻՆ. Խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանի բարձրացրած հարցը կուրսային աշխատանքների որակի բարձրացման, այդ աշխատանքների ներկայացման և պաշտպանության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասին:**

Խորհրդի նախագահը նշեց, որ կուրսային աշխատանքների ներկայացումը և պաշտպանությունը՝ որպես ուսուցման կազմակերպման ձև՝ կորցրել է իր արդյունավետությունը՝ պայմանավորված կուրսային աշխատանքների ցածր որակով, դրանց պաշտպանության գործընթացի ոչ ճիշտ կազմակերպմամբ: Հատուկ ընդգծելով, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բոլոր ամբիոններն ազատ են որոշելու կուրսային աշխատանքներին ներկայացվող բովանդակային պահանջները՝ խորհրդի նախագահն այդուհանդերձ կարևորեց վերջիններիս կողմից կուրսային աշխատանքները պաշտպանության թույլատրելու և դրանց պաշտպանության կարգին ներկայացվող պահանջներ սահմանելու առումով միասնական

չափանիշների կիրառումը այն հաշվով, որ բացառվեն թե՛ ձևական և թե՛ ծայրահեղ խիստ մոտեցումներն այս հարցում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ն.Այվազյանը, դոց. Վ.Ավետիսյանը, դոց. Ս. Մեղրյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանատի առաջիկա նիստերի ընթացքում մշակել կուրսային աշխատանքները պաշտպանության թույլատրելու և դրանց պաշտպանության գործընթացի հստակ չափանիշներ, տրամադրել դրանք ամբիոններին՝ պարտավորեցնելով դեկանատին և ամբիոնների վարիչներին այդ չափանիշների պահպանման տեսանկյունից հետևելու կուրսային աշխատանքների ներկայացման և պաշտպանության գործընթացին:

**5.3. ԼՍԵՑԻՆ.** Խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանի բարձրացրած՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, մասնավորապես համատեղությամբ աշխատող դասախոսների կարգապահության հետ կապված հարցը:

Խորհրդի նախագահը նշեց, որ հաճախակի են դարձել արտաքին ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ համատեղությամբ աշխատող դասախոսների բացակայությունները, ինչը հանգեցնում է ուսումնական գործընթացի կազմալուծման:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դոց Վ.Ավետիսյանը, դոց Ս.Մեղրյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

Ամբիոնների վարիչներին հանձնարարել խստագույն հսկողություն սահմանել իրենց ղեկավարած ամբիոնների՝ համատեղությամբ աշխատող դասախոսների կարգապահության նկատմամբ:

**5.4. ԼՍԵՑԻՆ.** Խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանի բարձրացրած՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողների կարգապահության, մասնավորապես, ուշացումների հետ կապված հարցը:

Խորհրդի նախագահը նշեց, որ պայմանավորված քաղաքային տրանսպորտի ծանրաբեռնվածությամբ, ճանապարհատրանսպորտային խցանումների առկայությամբ 1-ին հերթով սովորող շատ ուսանողներ 15-20 րոպե ուշանում են 1-ին դասաժամերից: Խորհրդի նախագահը հավելեց նաև, որ հաճախակի են այն դեպքերը, երբ որոշ ուսանողներ ուշանում են նաև այլ՝ ոչ առաջին դասաժամերից, այն

պարագայում, երբ դասախոսի՝ որոշակի ուշացումով է (մինչև 5 րոպե) լսարան մտնում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ն.Այվազյանը, դոց. Վ.Ավետիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1-ին հերթով սովորող ուսանողների՝ 1-ին դասաժամերից մինչև 20 րոպե ուշացումը, պայմանավորված օբյեկտիվ պատճառներով, համարել հարգելի և այդ ուսանողներին թույլ տալ մասնակցել դասին: Մնացած բոլոր ժամերից ուշացած ուսանողներին թույլ չտալ դասախոսից հետո մտնել լսարան:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Մուջան*